# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «05» փետրվարի 2020թ.

2020թ-ի հունվարի 29-ից փետրվարի 5-ը, ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 1/3 հասցեում գտնվող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գրասենյակում տեղի ունեցավ ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ա. Ասատրյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պատասխանատու (հանձնաժողովի նախագահ). |
| Ա. Ալեքյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի ավագ տեխնիկական մասնագետ. |
| Ա. Կարապետյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տրանսպորտային միջոցների շահագործման պատասխանատու. |
| Հ. Գուլաբյան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար): |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ասատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Հ. Գուլաբյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1. ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | Թուղթ, A4 ֆորմատի | - |

ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 1/3 հասցեում գտնվող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գրասենյակում՝ 2020 թվականի հունվարի 29-ին, ժամը «10:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 56, բն. 46 | Hovhannisyan8118@gmail.com |

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

- Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/15 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան:
- Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

| Հ/հ | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X» | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |
| 1* | 1 | X | Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | 3000000 | 3000000 |

* Հաշվի առնելով, որ մասնակիցը ներկա էր հայտերի բացման նիստին՝ տեղում վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացվում են ստորեւ.

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Ներկայացված հայտ/եր/ը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ (գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա /բանակցություններ)՝ մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին մասնակցի կողմից ներկայացվել է նոր նվազեցված գնային առաջարկ, համապատասխանաբար 2000000 ՀՀ դրամ:

## 2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ասատրյան ____________

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ալեքյան ____________

Ա.Կարապետյան ____________

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գուլաբյան ____________